

Ա. Քոչոյան

ԹԻԼԻՍԻ ԲԱՐԲԱՌԻ ՀՆՁՅՈՒՆԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ
Գ. ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Հայ մեծ դրամատուրգ Գ. Սունդուկյանն իր ստեղծագործությունները գրել է Թբիլիսիի բարբառով (միայն մի գործ՝ «Ամուսիններ» գրված է դրական լեզվով)։ Սունդուկյանի երկերի լեզուն Թբիլիսիի բարբառի մի փուլի արտահայտությունն է և այն էլ վերջին փուլի, երբ գրական լեզվի հաղթանակով մահվան էր դատապարտվում բարբառը։ Սունդուկյանը իր երկերում որքան էլ աշխատել է հարազատ մնալ իր մայրենի լեզվին, պահպանել Թբիլիսիի բարբառի հնչյունաբանական և ձևաբանական առանձնահատկությունները, սակայն գրական լեզուն իր ազդեցությանն էր ենթարկել Թբիլիսիի բարբառը։ Գրական լեզվի ազդեցությունը Թբիլիսիի բարբառի և Գ. Սունդուկյանի լեզվի վրա ամենից ավելի աչքի է զարնում բառային կազմի մեջ։ Հնչյունաբանություն մեջ այդ ազդեցությունը քիչ զգալի է, իսկ ձևաբանության մեջ գրական լեզվի ազդեցությունն աննկատելի է։

* * *

Թբիլիսիի բարբառն ունի 36 հնչյուն։ Այդ բոլոր հնչյուններն էլ արտահայտվել են Սունդուկյանի երկերում։ Դրանցից 6-ը ձայնավորներ են՝ ա, է, ր, ի, ու, օ, որոնք արտասանվում են գրական լեզվի նման։

Բաղաձայնների թիվը 30 է։

բ, պ, փ	ձ, ծ, ց	զ, ս	վ	լ, մ, յ, ն, ո, ր
գ, կ, ք	ջ, ճ, չ	ժ, շ	հ	
դ, տ, թ		զ, գ, խ		

Սունդուկյանի մոտ, ինչպես և Թբիլիսիի բարբառում, առկա է վրացերենի ղ՝ խիստ կոկորդային հնչյունը, որը գործածական է մեծ մասամբ օտար բառերի մեջ։ Օրինակ՝ «Յիս ղ՝աբուլ չիմ» (331—2)¹, «Ղ՝ալբացալ աշխարքը» (132—1), «Տէսա՞ր ինչ ղ՝ալթաբանգուբին բանէցրուց»² (78—1) և այլն։

Ղ՝ է լսվում նաև հայերեն տղ կապակցության փոխարեն³։ Օրինակ՝ վուրդանց (որտղանց-որտեղից) «Վո՛ւրդանցի ախպէր ին իմը» (57—1), էսդանց (էստղանց-այստեղից) «Ինձ էսդանց ազատէցէք» (58—2), «Դուն էսդանցի չիս» (339—1)։ Ղ՝ լսվում է նաև երբեմն տղ կապակցության հետ միասին։ Օրինակ՝ «Վո՛ւրտղանցի քու ախպէր է, նրա պէս ազահ չիմ տէսի» (324—1)։

¹ Բոլոր օրինակները բերված են Գ. Սունդուկյանի «Երկերի լիակատար ժողովածու, մեկ հատորով» գրքից, Երևան, Պետհրատ, 1934։

² Ուսումնասիրության մեջ հեղինակի գրական տրանսկրիպցիան վեր ենք ածել բարբառային տրանսկրիպցիայի։

³ Տե՛ս զոկտ. պրոֆ. Լր. Ղարիբյան, «Հայ բարբառագիտություն», Երևան, 1953, էջ 269։

Սունդուկյանը ֆ հնչյունի փոխարեն մեծ մասամբ գործ է ածում փ (որովհետև գրաբարի նման Թրիլիսի բարբառը ֆ չի ունեցել): Օրինակ՝ «Յիս փուտով, դուք փայտածնով» (284—2), «Փանըռնէրու լուսով փառավուրդէցէք» (406—2), «էրէխուց փռանցուղնէրու մօդ է մինձացի» (282—2), «Պրաշչայի Թրիլիզ» (65—2) և այլն: Սակայն գրական լեզվի ազդեցութեամբ Սունդուկյանը երբեմն գործ է ածում նաև ֆ հնչյունը՝ «Փարբիկէքն ու դափօդնիրը շատացավ» (257—2), «Սօրվէցա ֆօրտօպիանը» (168—1), «Ֆրանսէվար կօտրում» (426—1) և այլն: Շատ հաճախ միևնույն բառը գործ է ածում և՛ փ-ով, և՛ ֆ-ով: Օր. Թրիլիզ (65—2) և Թրիֆիզ (324—1), փռանցուցէվար (30—2) և ֆրանսէվար (426—1), փրանտ (441—1) և ֆրանտ (15—1) և այլն¹:

Ի հնչյունը արատասանվել է ավելի մեղմ, «ը» հնչյունի նրբերանգով: Օր. ցանցառ-ցանցար «Յանցար-ցանցար մի՛ դուս տա» (112—2), ռանչպար-րանչպար «Միզպէս րանչպար խալիը մի՛ր ապրուստը ձիւլ ինք ճարում» և այլն: Երական լեզվի ազդեցութեան տակ, այնտեղ ուր ը պետք է գրվեր, Սունդուկյանը հաճախ գործ է ածում «ը»: Օր. «Սէլօքը գժանում է ու ցանցառանում» (407—1), «Ասկի ուռքար Գիօրգի ջան» (37—2), «Քու քաղցըր ձէնին մէռնիմ» (58—1), «Քու մագիէր յիս պատկիմ» (58—1) և այլն:

ՀԵՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Գ. Սունդուկյանի երկերում նկատվում են հնչյունափոխութեան հետևյալ կարգի երևույթները:

Ձայնավորների փոփոխութիւններ

Ա ձայնավորը բազմաթիվ բառերի մեջ երկրորդ վանկում սղվում է, երբ գտնվում է երկու բաղաձայնների միջև: Օր. հալատալ-ալտալ. «Մի՛ր մէջ սէր ու ալտալ էլ չկա» (76—1), հովանալ-հօլնալ «Լավ վուխտ է հօֆնալում» (356—2), առաջին-առջին «Առջինը չիս դուն ու վիրչինը» (353—1), բարեկամանալ-բարէկմանալ (176—2), բարեկամութուն-բարէկմութին (347—1) և այլն:

Մի քանի բաղաձայնների կուտակման դեպքում ա>ը, օր. գանգատվել-գանգըտվիլ «Յիս դրուստ իմ գանգըտվում քիմէն» (337—1), դատարկել-դարդրկիլ «Ջուրը դարդրկէցին» (430—1), կարկատել-կարկըտնիլ, «Դանի ջէր իմ փէշիրը կարկըտնի» (167—1) և այլն:

Ա ձայնավորը ենթարկվում է նաև հետևյալ հնչյունափոխութեան.

Ա>է, արծաթ-էրծաթ «Աշխըրքի էրծաթն ու օսկին միրն է» (59—1), արժան-էժան «էժան ապրանք ին ծախում» (19—2), խաչ-խէչ «Վունց խէչն է միզ օսկում, վունց աստուձ» (156—2):

Ա>ու միայն վախտ-վուխտ բառի մեջ «Հօրէս կէօրի վուխտն է» (130—2):

Ա>օ «ու» ձայնավորից հետո կօսիմ, կօնիմ, կօծիմ բառերի մեջ (փոխանակ կու ասիմ, կու անիմ, կու ածիմ): «Անումի կօտրիլը դժար է, կօսէ» (301—1), «Ի՞նչ կօնիմ յիս նրան» (108), «Սխառուրը վրէն կօծիմ» (179—2):

Ե>յի միավանկ և երբեմն նաև բազմաթիվ բառերի սկզբին: Օր. Էս-

¹ Սունդուկյանի մոտ ֆ-ով հանդիպում ենք 18 բառ, բոլորն էլ օտար (եվրոպական): Մնացած օտար բառերի մեջ (գլխավորապես մերձավոր-արևելյան) բոլոր տեղերում կա փ, (օր. քէփ, մարիփաթ, փանդ, փարադի, փարսէրէն, փալ, քուփթա և այլն):

յիս ճիւղի յիս բղավիմ, յիս պիտի հարալի տամ... յիս քիզ կու շանց տամ» (150—2): Երբ-չիւի (ի պալթականից առաջ ր-ի անկումով) «Յիւփն էկար» (21—1), «Յիւփօր շնուր կու բէրիս» (31—1), Եի գալ—չիւի գալ «Կարէ կարասը յիւի է գալի» (59—1), Երկիր-չիրգիր «Ինչ չիրգիր գնաս, էն չիրգրի գդակ ծածկէ» (23—2), Երկնային-չիրգնային (162—1) և այլն:

Ե>ի բառասկզբում և բառամիջում: Երեք-իրիք «Իրիք էտաժանի անիր» (428—1), Երեկո-իրիգուն «Բարի իրիգուն ձիգ» (29—1), Երեցիոխ-իրիցիուխ (428—2) և այլն:

Բառամիջում բոլոր միավանկ բառերում. մեծ-մինձ (428—2), տեղ-տիղ (438—2), խեղճ-խիղճ (428—2), ցեխ-ցիխ (140—2) և այլն:

Օժանդակ բայերի խոնարհման ներկա ժամանակի 1-ին և 2-րդ դեմքերում և հոգնակի 1, 2, 3-րդ դեմքերում ևս Ե>ի: «Ուզում իմ առնի» (365—2), «էկիլ իս վուր մա՛սխարա գցիս ինձ» (150—1), «Վուրդ՝անցի ախպէր ինո» (156—1), «Գծվիլ իք» (56—1), «Ուլիրօ էժան ին տալի» (365—2):

Ե>է բառասկզբում և բառամիջում. Երես-էրէս «Կու թքիմ էրէսին» (430—1), բերան-բէրան «Հալած արճիճ ածէք բէրանը» (64—1), Եկեղեցի-էգէղէցի «էգէղէցու բօլօրքն աղօթք իմ արի» (154—1) և այլն:

Ե>ա միայն եղբայր-ախպէր բառի մեջ. «Ախպէր, չիմ գիդի օլ իս» (15—2), «Իմ ախպուր կայինքը զավթէցի» (61—1):

Ե>օ բառասկզբում միայն երկում-օրթում բառի մեջ. «Օրթում կի թէ պարտ չիս» (149—1), «էտ է քու օրթումն էլի, էտէնց իս ամէն օր օրթում ուտում» (160—1):

Բառասկզբի անշեշտ Ե—ն որոշ դեպքերում ընկել է: Օր. Եղունգ-ղունգ կամ զուգ «Նրա զունգը չիմ փօխի Դանիլիչի վուրթու հիգ», «Ինչի գուգը մկըր-ատօլ չիս դուս քըչիօրում» (429—2), «Բարի երեկո-բարիգուն» (32—2) և այլն:

Ե>ի թեքման և քարգման ժամանակ շեշտի տեղափոխություն պատճառով: Օր. էշ-էշի «Դառավ իշի մարտիրոս» (184—2), գէլ-գիլի «Արի ու գիլի գըլխին ավէտրան կարթա» (25—1), տերութիւն-տիրութիւն «Վից էրէխա ունիմ, նրանցը տիրութիւն կօնի՞ս» (265—2):

Բ. ձայնավորը ընկ հնչյունափոխություն միավոր բառերի մեջ և ձայնորդի ազդեցությամբ բառասկզբում հնչվում է և, իսկ խուլ Կ>գ: Օր. ընկեր-ննգիր «Ուզում իս հիգը ննգիր դառնա՞» (16—2), ընկնկ-ննգնիլ «Մարթ փուղի էդնէն ննգնի՞» (176—2), ընկուլգ-ննգուլ «Ննգուլը կծու է էլի» (371—1):

Ի՞ ձայնավորը բոլոր տեղերում անփոփոխ արտասանվում է ի, միայն երբ վերջին վանկի շեշտն անցնում է հաջորդ նոր ավելացրած վանկին ի>ը կամ սղվում է: Օր. դինշ-դընջանալ «Մէ քիչ դընջացի» (130—1), ախչիկ-հոգն. ախչըկիրք «Փիս ախչըկիրք ին» (423—1), կնիկ-կընգա «Ձէհէլ կընգա պէս մարթու ջէհէլացնօղը վունչիչ չի ըլի» (144—1):

Ո>վու թե՛ միավանկ և թե՛ բազմավանկ բառերի սկզբին: Օր. որ-վուր «Մէ կնիկ է վուր...» (428—2), վոչ-վուչ «Վուչ էր ըլի էն փուղի անումը» (136—2), որդի-վուրթի «Վուրթիքըդ ապրին» (132—1):

Ո>օ որոշ բառերի սկզբում ըստ բարբառի շեշտի կանոնի (Թրիլիսի բարբառում շեշտը նախավերջին վանկի վրա է): Օր. ոչխար-օխչար «Օլ էր ասում քիզ, վուր օխչըրի չիրիշօլ ման գաս» (156—2), ողորմելի-օղորմելի (156—2), ոսկի-օսկի (58—2), որդեր-օրթունք «Ամէն մէ քու օրթումը օրթունք դառնա ջանումըդ» (160—1):

Բառասկզբում $n > o$ նաև հարաբերական գերանվան մեջ. օր. ուլ-օւլ αO^o վ էր դարձը, օ՞վ սուտը, դժար էր ջողիլը» (423—1):

Բառամիջում (թե՛ միավանկ և թե՛ բաղմամբանկ) $n > m$, օր. փող-փուղ α Ամէն ցափի դիղը փուղն է» (379—1), հոր-հուր α էստու համա բիրթը կի չէ, հորումը կու նստիմ, հուրումը» (146—1), դժոխք-դժուխ α Գուլի դժուխը դնամ» (152—1), կտոր-կտուր α Կրակի կտուր է» (146—2), զոդութուն-զոդութին α Դուն՝ զոդութի՛ն, չէ, Պէպօ» (157—1) և այլն:

Բաղմամբանկ բառերի մեջ n -ն ընկնում է կամ հնչյունափոխվում է ը-ի: Օր. սովորել-սորվիլ α Վուր մէոնիս պիտի սորվիս» (140—1), խորոված-խորոված α էս էլ էրված ու խորված սիրէկնի կինացը» (74—1), ուրբել-օլըրիլ (183—2), մուրովիլ-մօլըրիլ α Յիս էլ մօլըրիլի իմ» (88—1) և այլն:

Ու ձայնավորը բառասկզբում, բառամիջում և վերջում մնում է անփոփոխ:

Բառասկզբի ու-ի անկում հանդիպում ենք միայն α դ» բաղաձայնից առաջ (որտեղ ու-ն անշեշտ է): Օր. ուղեղ-ղուղ (հմմտ. եղունդ-ղունդ) α Օրթունք զուղըս ուտում է» (255—2), ողարկել-ղըրդիլ α Բաս բիրթն էլ ո՞ւր իս զըր-դիլ տալի» (161—2), ողորդ-ղուրթ α Ղուրթն ու սուտը չիս չիմ դիդի» (381—2), ողորդել-ղուրթիլ α Երան մի՛ դուրթի» (318—1):

Բառի թեքման ժամանակ ու-ն փակ վանկում կամ սղվում է, կամ դառնում է ը: Օր. ալուր-ալրէմէն α Սալղըթէ ալրէմէն տնիր շինից» (428—1), գրուտ-ղըրըստիլ αO^o է գրըրստի աշխըրքի բանիրը» (262—2):

Բաց վանկում ու-ն գրական լեզվի նման դառնում է վ: Օր. լիղու-լիզվի α Լիզվիս ծէրին պըտիտ էկավ» (154—1), լու-լըվի α Լըվի աօլ բանը ուղտ ին շինում» (413—2):

Երկրարբանների փոփոխություններ

Սունդուկյանի երկերում և Թրիլիսիի բարբառում երկրարբանները փոխարինված են պարզ հնչյուններով:

Այն $> \epsilon$ միավանկ և բաղմամբանկ բառերի սկզբում և միջում: Օր. ալս-էս α էս հանդի էլ մարթ կուլի» (152—1), ալդ-էտ α էտ հանդի էլ խօսիլ կուլի» (135—1), ալն-էն (152—2), ալծ-էծ α Սարի էծ է անիծածը» (171—2), ալդուց-էքուց α էքուց կու իմանաս» (293—1), ալրել-էրիլ α Փէտի մադիէր էտ ինք էրում» (450—1), հալր-հէր, մալր-մէր α Սօսիլը հէրն ու մէրն ին» (349—2), կալծակ-կէծակ α Կէծակը վէր գրցէ զըլիսիս» (150—1), տղալք-տղէրք (289—2), սատանալք-սատանէք (59—1) և այլն:

Միավանկ և բաղմամբանկ բառերի վերջում գրաբարյան այ երկրարբառի դիմաց կա ա: Օր. փեսալ-փէսա (200—1), ծառալ-ծառա (345—2), երեխալ-էրէխա α էրէխա-էրէխա խօսում իս» (286—2):

Ութիւն $> m$ թին վերջածանցով բարդված հաղվադեպ բառերի մեջ ալ $> \epsilon$ կամ ընկնում է: Օր. եղրալրութիւն-ախալըրութիւն (369—1), երեխալութիւն-էրէխալութիւն α Ի՞նչ իս էրէխալութիւն անում» (310—2), փեսալութիւն-փէսալութիւն α Իմ փէսալութիւնի պատվին արժանի է էլի» (342—1):

Այ երկրարբառը որպես ինքնուրույն երկհնչյուն պահպանվել է ցուցում կամ հուզմունք արտահայտող բառերի մեջ: Օր. α Այ, Պէպան ջան, վունց էր» (159—2), α Այ, վի՛ր ջընջըլի քու անումը» (161—2):

Գրարարյան աւ երկրաբարտը թե՛ բառակերպում և թե՛ բառամիջում արդի հայերենի նման բաղաձայնից առաջ դարձել է օ։ Օր. աւր-օր (403—2), աւձ-օց (116—2), ամաւթ-ամօթ (352—2) կամ ամութ լեկմութ քիզ Արու-թին, ամութ քիզ (158—1)։

Բառակերպում, բառամիջում և բառակերպում աւ-ի դիմաց արդի հայերենի նման կա աւ լ երկհնչյունը։ Օր. աւելել-ավիլիլ (39—1), հաւատ-հավաա (149—1), պառաւ-պառավ Պառավ զօչաղը լավ է, կանց ջէ՛նէլ դամբէն (145—1), ազոաւ-ակոաւ թիմ ջէ՛լրան, իմ ա՛կոաւ (145—1), դրաւ-զրաւ գէս հանդի իմքինը դրաւ կու դընվի՞ք (116—2) և այլն։

Բազմապնակ բառերում Գաւ ձայնավորի կտրուտով աւ երկրաբարտի աւ լ երկհնչյունից մնում է միայն լ՝ հետևյալ բառերում՝ ծարաւիւլ-ծառվիլ (430—1), պառավիւլ-պառվիլ Շիւս պառվիլ իմ (306—1)։

Աւ>ու հետևյալ բառերում. աղաւնի-աղունակ լեկոնակն էլ դուն իս, վարթն էլ ու մանուշակն էլ (145—1), առաւօտուն-առտայան գէրէզ առտայան իր բէրնով առաւ (124—2) կամ առտաէհան (19—2), լօնք-ունք Վլօղինի աճկ ու ունքին մէռնիմ (339—2)։

Գրարարյան նա երկրաբարտը բառամիջում դարձել է ի կամ ա։ Օր. լիարդ-լիրթ Վիրթ ու լիդիս դէվէր էկաւ լացէմէն (40—1), կիանք-կինք Վինքը հարամ արիք (161—2), իւրեան-իրան Վրան սիւյցրու էդ սիւ ու մութ բարաթը (162—2) և այլն։

Գրարարյան նաև սևո. հոլովի բառերը բարբառում վերածվում են լև կամ լևի վերջավորության։ Օր. արեան-արէն լեկաւ աւ, իմ մահը իր արէն դինը վիկաւնէ (358—2), լուսաւորութեան-լուսավորութենի Վիս լուսավորութենի անհաշտ թշնամին... (64—2)։

Գրարարյան Վ խոնարհման բայերի հրամայական կոանակի նա վերջավորությունը դարձել է ն։ Օր. օրհնեա-օրնէ Վճօ՛, արի՛, օ՛րնէ, է՛ք (11—1), օղնեա-օտէ՛ Վիդն մարթ իմ, օտէ՛ք (149—2) և այլն։

Բառակերպում սկզբից գրարարյան նա լեւութ բառը բարբառում դարձել է Վօրաք Վօրաք դիվի հէքիաթ (159—2)։ Բառամիջում կողմ գրք. կաւ>ի։ Օր. սեւաւ-սիւ Վիւ սատանի ուսաա դա (114—1), առջեւաւ-առչիւ Վիտի առչիւը ջիւրիւր տնէնա (6—1) և այլն։ Վանոնից շեղվում է բարեաւ-բարով բառը Վ—Օհ, բարով, նատալիա ջան։—Բարով, ձիա ջան (19—1)։

Սալ>է (ինչպես արդի գրական լեզվում)։ Օր. ոսկեալ-օսկէ (287—1), արծաթեալ-էրծրթէ (416—2), երկաթեալ-էրկրթէ Վերկրթէ ճամփա սարքէցինք, (377—2) և այլն։

Գրարարյան նա երկրաբարտը միավանկ և բազմապնակ բառերում դարձել է լի և լի։ Օր. թեւ-թիւ (347—1), դեւ-դիւ Վիլի հանգն է խըրմփում (354—2), թեթեւ-թէթիւ Վէթիւ հաղաց (340—1), հարեան-հարէվան (273—1), եւեա-էվէա Վէս դիշիր էվէա (23—1)։

Գրարարյան իւ բառակերպում դարձել է ի և յի։ Օր. իւրեան-իրան Վրան-իրան փիքր արաւ (114—1), իւղ-լիղ Վիղում է աթմօրթու զլուրք (358—1)։ Բառամիջում բաղաձայնից առաջ իւ>ու։ Օր. ձիւն-ձուն Վիպաա ձուն է (144—1), արիւն-արուն Վրունըս իմում էր (58), հարիւր-հարուր (192—1)։ Հոգնակիում դառնում է ի Վարիւրէրով է ածած (429—2)։

Վերացական գոյականի ուրիւն ածանցի իւ>ի։ Օր. վատութիւն-վաղութիւն Վլաղութիւն քու փէշակն է (182—1), աղատութիւն-աղատութիւն Վրաշ-

չալի ազատութիւն» (65—2) և ալլնու «Ղ» բաղաձայնից ստաջ բառամիջում նախապես իւ > իւ Օր. զիւղ-զիւղ «Բնանք զիւղամի ապրինք» (105), զիւղացի-զիւղցի (338—1):

Այ երկրորդաոր միտմանի և բաղմամանի բառերի մեջ շեշտի տակ կամ շեշտից հետո գտնւում է ու Օր. լոլս-լոսս «Լաւոր քո աւանդին» (Ստմ. 67), թոլլ-թոլ (347—2), ստոլց-սաւոց (382—2):

ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Չայնեղ պալլաականներ

Չայնեղ պալլականները Սանդուղլանի երկերում, Թրիլիսի բարբառի նման, բառակցին ենթակա են հոստախճան բաղաձայնական սխառմին, ալ-սինքն անտեղաշարժ են:

Չայնեղ պալլականներ լւ, դ, զ, ձ, ջ (ինչպես և իսու պալլականները) բառակցում արտասանւում են դրական լեզվի նման, իսկ բառամիջում և վերջում ենթարկւում են տաջին անտեղաշարժին, ալսինքն վերածւում են շնչեղ խոչերի (բաղաձայնի վնում է ն-ից հետո, ուր պահւում է ձայնեղութիւնը): Օր. խարել-խաւիլ «Էսէնց խաւիլի Երվէն Աթամին» (12—2): արւ-վարի «Վարի ալսիլ է» (313—1), ձղել-ձղիլ (148—2), սուգ-սուս (154—1): Կնչլանք բառամիջում պահպանւում է իր ձայնեղութիւնը և անպակնից հետո Օր. քանդել-քանդիլ (106), անդու-սանդուկ (306—2): Ն անդուլնից հետո հապկաւիլը կնչլանք նախապես պահպանւում է իր ձայնեղութիւնը Օր. մանր-մանրր (106), մանրաք-մանդրան «Մանդրան ծախողնիրը խիղճ մարթիլ ին» (23—2): Մնացած դեպքերում վերածւում է շնչեղ խոչի Օր. երգամ-օրթում (134—2), աղամօրթի-աթմօրթի «Քիս էլ կոսիմ թէ աթմօրթի իմ» (150—1), օղ-օթ (372—2) և ալլնու Չ Կնչլանք նախապես պահպանւում է իր ձայնեղութիւնը բառամիջում և բառավերջում ն-ից հետո Օր. անձրե-անձրրիլ (140—2), պղինձ-պղինձ (133—2), մնացած դեպքերում (զլխափորապես լւ-ից հետո) ձ > դ: Օր. սրձուկ-սրցուկ (307—1), օձ-օց (116—2):

Կնչլանք վերածւում է չ-ի բառամիջում երկու ձայնափոքների միջև և իւ, դ, ս, ր բաղաձայններից հետո, իսկ բառավերջում իւ, ր բաղաձայններից հետո Օր. տաջանալ-տաջանալ (151—1), տաջին-տաջին (157—2), աղջիկ-ախչիկ (87—1), սղջութիւն-վախչութիւն (255—1), թրջիկ-զրրչիկ (430—1), սղջ-վախչ (14), վիլջ-վիրչ (134—2): Ն ձայնորդից հետո բառամիջում և բառավերջում ջ-ն պահպանւում է իր ձայնեղութիւնը Օր. ջնջիկ-ջնջիկ (161—2), մանջ-մանջ (469—1) և ալլնու

Խուլ պալլաականներ

Պ Կնչլանք բառակցում, բառամիջում և բառավերջում մնում է անփոփոխ Բառակցում բնդհանուր կանոնից շեղւում է միայն «պառի» բառը, որը ուղիղ և թեքված բոլոր ձևերում հանդես է գալիս «փոսակ» ձևով: «Փաթաք ու փոսակին էլ արժանի չիս անում» (33—1), «Թաքուն փոսակէցինք» (123—1), «Մէ պառլիկ պաջ մէնակ, միր փոսակամը դոս ու քանք» (347—1):

¹ Տե՛ս պրոֆ. Ար. Պարլիլան, Հայ բարբառագիտութիւն, Երևան, 1933, էջ 268:

Բառամիջում ի ձայնավորից հետո պար, գիպիլ-գիպչիլ բառի մեջ ռիբալ ձայնը չանդրվինք (Ու. 19 - 2), Քալալը գիրավ պատվինք (365 - 1)։

Վ հնչյունը բառակցքում հնչվում է ի Միախն կա հղանակիչի մեջ պալ-մանական հղանակի գեպքում կ-ից պալք բաղից առաջ, իսկ վերջինիս ձայնից գ-ն գառնում է խալ պալթական ըն Օր. Շիլից դա քամք (139 - 2), Վառն դա քամ րաթրքրք (143 - 1), Քիլի օխալմէն օլ դա քամ (139 - 1)։ Պարմանական ապառնիի ժամանակ բառակցքում նախապես հնչվում է գ Օր. կալիմ-գալիմ (368 - 2), Վալիլի փալլը կալ րէլէք (135 - 1)։ Բառամիջում ա ձայնավորից հետո հ ա, շ, իս խալ բաղաձայններից հետո հնչվում է գարձալ խալ Օր. Շալալալալ բալք (297 - 1), Վիլ արիլալիք (162 - 2), Վալիմ նրա շրշ-կրլալ գլալալ (4 - 2), Վալիլի, ժալիլիք (177 - 2)։ Բառամիջում ն սնդալի-նից առաջ հ ձայնավորից հետո կ-ից Օր. ձալն-ձալքն (138 - 2), րնկնիլ-ննկնիլ (130 - 2), րնկուլ-ննկուլ (371 - 1), ջալիլ-ջոլիլ (130 - 2), թեկուլ-թէկուլ (135 - 2) և այլն։

Բառամիջում նախապես հնչվում է ի Մի քանի բառերում, առանց բնդ-հանուր կանոնի, կ-ից կամ շնչից պալթական ըն Օր. արեկալ-արէկալ (Ուաթ. 5), երեկ-էրէկ (139 - 2), շալիլ-շալիլ (143 - 1) և այլն։

Տ-ն բառակցքում արտասանվում է խալ ա։ Բառամիջում երկու ձայնավորների հ ձայնից բաղաձայնի միջև ա-ից Օր. գեալի-գէլիլ (140 - 2), գիալի-գիլիլ (Ուաթ. 56), գալիլ-գալիլ (396 - 1), անալի-անլիլ (Ուաթ. 28), տանալիլի-տանլիլիլ (78) և այլն։ Այս կարգի մեջ մանուկ մի քանի բառեր գրական լեզվի ազդեցությամբ առաջ առաջանել են ա-ի խալ վիճակը Օր. Վնաալ խալիլ գիլէք (316 - 1), Վնչ կանամ կաալիլ (303 - 2), գան-գաալիլ-գանլիլ (276 - 2) և այլն։ Բառամիջում ա-ից ախալ, Վհաալ կաալիլի բառերի հ Վաաալ, Վգաաալ, Վլաաալ բառերի վերջում ՎՎալ նաալի ու-ղից (429 - 1), Վշիլիլ խալիլիլ իմալքա (30), Վու վալքն իմ ուլալմք (100) և այլն։

Տ-ի անկում նկատում ենք բառամիջում աստատված բառի բարդված և թեքված ձևերում և Վաալիլալ բառում։ Վաաաաաաաա ու աաաա էլ չի կարելի ր օրումք (59), ՎՎլ ումիլ ունիլ մոլմէնք (57)։ Մնացած բոլոր գեպքերում Սունդուկյանի մաս հանդիպում ենք աստված կամ աստված ձևերին։ Վաաաաաաաա գաալի մեջ ա և ի նմանահնչյունությամբ և վերջինի ուղղնությամբ աաաաաաաա ալիլ է ունեցիլ ա-ի անկում Վհաաա վրա վալթալ խալ մէկէլիլինքն ին ժամ գալիլ (36)։

Մ-ն բառակցքում արտասանվում է խալ ծ։ Բառամիջում և բառավերջում ծ-ն, ր հնչյուններից հետո Օր. մեմ-մինք (158 - 2), մեմանալ-մին-ձալալ (16 - 2), գործ-գործ Վլաալ րան ունէ, փունց արքա (9 - 1), գործիլ-գործրիլ (աժուիլ) Վնաալիլ գործրիլ ու վէան էլ բարաքա ունէք (172 - 2) և այլն։ Այս կանոնից շեղվում է արծաթ-էրծաթ բառը, որի մեջ ծ-ն պահպանում է իր խալթյունը գրական լեզվի ազդեցությամբ Վերծրթիլ քամալք (142 - 2), Վերծրթիլիլ նալիլիլինք էք (377 - 1)։ Մնացած բոլոր գեպքերում ծ-ն պահպանում է իր խալթյունը Օր. կալթալ-կէժալ (140 - 1), պարծանք-պարծանքա ՎՊարծանքալ իմ աստմք (154 - 1), ալծ-էծ (171 - 2) և այլն։

Ճ-ն բառակցքում մնում է խալ ճ։ Բառամիջում Վ ձայնից հետո և բառավերջում ն սնդալիլից հետո ճ-ն Օր. վճալիլ-վճալիլ, ՎՎու խալիլինք

կու վջարիմ» (8—2), ճանճ-ճանջ (39—1): Մնացած բոլոր դեպքերում մը-
նում է ճ:

Խուլ-շնչեղ պայթականներ

Փ-ն բոլոր դեպքերումն էլ արտասանվում է փ:

Ք-ն նույնպես բոլոր տեղերում արտասանվում է ք, ի բաց առյալ հե-
տևյալ դեպքերի: Բառասկզբում ք>կ, երբ բառավերջի բաղաձայնը նույնպես
խուլ շնչեղ պայթական է (տարնամանման օրենք): Օր. քանց-կանց «Մահըն
ուփրօ հիշտ է, կանց շունչ քաշիլը» (150—1): Բառամիջում ք>կ, երբ բա-
ռավերջի բաղաձայնը խուլ պայթական է (առնամանում), ինչպես ախքատ-ախ-
կատ «Գանա չիս ախկատ իմ» (148—2), «Կէհամ ախկրտութին կօնիմ» (136—1):
Բառավերջում ս, խ, տ, շ, ճ խուլ շփական և խուլ պայթական հնչյուն-
ներից հետո ք>կ: Օր. խոսք-խօսկ (135—1), մեղք-միխկ (135—1),
դժոխք-դժոխկ (57), պարտք-պարակ (139—1), ուշք-ուշկ (430—2), աչք-
աճկ (428—1) և այլն: Բառավերջում ց, չ, թ շնչեղ պայթականներից հետո
նույնպես ք>կ: Օր. լվացք-լվածկ (293—1), խմիչք-խմիչկ (143—2), աղոթք-
աղոթկ (32—1):

Ի-ի անկում կա խելք բառի նախածանցավոր ձևում, ինչպես անխելք-
անխիլ «Լուսնց ազատիմ չիս էն անխիլին» (68—1), անխելքութիւն-անխիլու-
թին (269—2): Կա նաև առանց անկման (գրական լեզվի ազդեցությամբ) «էս
հանգի անխիլքութէնին համիիրիլ չի ըլի» (360—1):

Թ-ն նույնպես բոլոր տեղերում հնչվում է ֆ, ի բաց առյալ մի քանի
դեպքերում: Բառասկզբում միայն «թրջիլ» բառն է, որ արտասանվում է
«դըրջիլ» ձևերով, որտեղ թ>դ ընդհանուր ազդեցության տակ «Դըրջէցին,
խարաբ արին իմ Մակակօյին» (430—1), «Նրա բէրնումը խօ լօրի չի դըրջըլի»
(19—2):

Թ>տ «խ» հնչյունից հետո բառամիջում և վերջում: Օր. չախթիլ-ախ-
տիլ «էն ինչ Բուրը պիտի ըլի, վուր նրան ախտէ» (131—2), «էս ի՞նչ թուխտ
է» (157—2), «Օխտը թուման փուղ կօնէ» (42—2):

Ց բոլոր դեպքերում, առանց որևէ բացառության, հնչվում է ց:

Չ-ն նույնպես բոլոր դեպքերում լսվում է չ, բացառությամբ «աչք»
բառի, որը Սունդուկյանի երկերում մոտ 50 բառակապակցության ու ոճերի
մեջ հանդես է գալիս «աճկ» ձևով, իսկ «աչկ» հանդիպում ենք մի քանի տե-
ղերում:

Ձայնեղ շփականներ

Ձ-ն բոլոր տեղերում լսվում է զ: Բառամիջում ընդհանուր կանոնից
շեղվում են ա) ազգ և նրանով կազմված բարդությունները, որոնց մեջ զգ
հնչվում են խուլ: Օր. «Ասկի պայծառութին է» (8—2), «Անունըն ու ասկըն
ինչ ասիմ» (Սաթ. 55), ասկական (310—2), ասկականութին (90): բ) անըզ-
գամ-անըսկամ (159—1), գ) մէկըսմէկէմէն, մէկըսմէկու թեքված ձևերի մեջ
գրաբարյան «զ» հայցական հոլովանիչը խուլ պայթական կ-ի մոտ դարձել է
ս «Մէկըսմէկէմէն չին բաժնըլի» (152—1), «Մէկըսմէկու գլուխ կու կօտրին»
(140—2):

Փ-ն բոլոր դեպքերում հնչվում է փ:

Լ-ով սկսվող բառեր Սունդուկյանի երկերում հետևյալներն են՝ ուղղորդ-
ղուրթ (15—1), ուղեղ-ղուղ (155—2), եղունգ-ղունղ (100—1): Փոխառյալ

բառերը բառասկզբում հնչվում են վրացական խիստ կոկորդային ղ՝ հնչյունով: Օր. դարուլ (312—2), դադաղա (158—2), դասար (403—1) և այլն:

Բառամիջում երկու ձայնավորի կամ ձայնավորի ու ձայնեղ բաղաձայնի միջև մնում է ղ: Օր. Վէ ծաղիկ իս միր ասկի համա» (314—1), նեղանալ-նի-դանալ (193—2), դեղին-դիդին (142—1), դեղնեղ-դիդին (189—2) մեղր-միդր (367—1): Բացառությամբ է կազմում աքաղաղ > աքալար > աքուր, որի մեջ ղ > լ: Վարթովից աքուր ակնիկըն էր» (428—1):

Բառամիջում խուլ բաղաձայնների մոտ խլանալով ղ > խ: Օր. եղբայր-ախպէր Վմ ախպուր կալինքը զավթէցի» (60—1), կողպել-կոխպիլ (428—1):

Հ հնչյունը քարբառում մտել է վրացերեն լեզվից և հնչվում է ինչպես վրացերենի յ (ղ) կամ արաբերենի ڤ:

Բառասկզբում և բառամիջում ղ-ն հնչվում է վրացերեն և այլ փոխառյալ բառերում: Բառամիջում ղ լսվում է նաև հայերեն տղ կապակցություն փոխարեն:

Վ-ն բոլոր դեպքերում հնչվում է վ:

Խուլ շփականքներ

Խուլ շփականներ ս, շ, խ հնչյունները բոլոր դեպքերում հնչվում են գրական լեզվի նման:

Խուլ շփական հ-ն բոլոր դեպքերում հնչվում է հ: Բառամիջում բացառությամբ են կազմում խորհուրդ և օրնցել բառերը, որոնց մեջ հ > խ, իսկ լ-ն ընկնում է:

Հ-ի անկում ունենք բառասկզբում ա ձայնավորից առաջ՝ հաղթել-ախուիլ (131—2), հավատալ-ավտալ Վժլ կու ավտա միգ» (139—1), համարամա Վրուն քիզ ամա, իմ ախչիկըն ինձ ամա» (Խաթ. 60, 1881), հեղեղ-օղօղ (կազմվել է ողողել-ի նմանությունով) Վրտինքը օղօղի պէս վէր էր գալի» (364—1): Բառամիջում հ-ի անկում հանդիպում ենք փահլեան-փալէվան բառի մեջ Վստի ու մինձ փալէֆի» (409—2): Բառամիջում վերոհիշյալ օրինակները հ-ի անկումով պահպանվում են «ան» նախածագանվոր բառերում:

Բառամիջում և բառավերջում հ-ի անկում լինում է լ-ից հետո: Օր. շնորհակալ-շնորակալ Վնառ շնորակալ իմ» (114—1), Վհաս մէ շնորակալու-թին անինք» (159—1):

Ջայնորդներ

Լ-ն բոլոր տեղերում լսվում է լ: Վաղակատարի և անորոշի լ-ն ընկնում է, երբ էական բաժն առաջադաս է լինում: Օր. Վուգում իմ խաղա» (12—1), Վոնչ էլիր ուզում ասի» (319—2), (Վնիփրբստա չիմ էլի» (7—1), Վուր է կանչի ինձ» (8—2) և այլն: Իսկ երբ էական բայը հետադաս է, լ-ն պահպանվում է: Օր. Վէլիլ իս, վուր մասխարա գըցիս ինձ» (159—1), Վճո՛, գըժվիլ իս» (159—2), Վնսիլ իս ու խօստացիլ իս» (294—2) և այլն:

Մ-ն առանց բացառության բոլոր դեպքերում հնչվում է մ: Մ-ի անկում կատարվել է միայն Վսիթարվել» բառի մեջ, միթարվել-իթարվիլ Վհաս վոնց խիթարվի խիդճը քի վրա» (16—2), թեպետ գրական լեզվի ազդեցությամբ հանդիպում ենք նաև առանց անկումի Վստում էս հանգի միթարութին է տվի ինձ» (300—1):

Յ ձախորդը արդի հալերենի նման բառասկզբում դարձել է հ: Օր. լուսիտեան-հավիդեան (88), լիշեկ-հիշիկ (144—2), լիմարութիւն-հիմարութիւն (173—1) և այլն:

Յ-ի անկում հանդիպում ենք բառասկզբում յաջող-աչող և սրանով ածանցված ձևերում: «Բանըս աչող է գնում» (260—1), յախթել-ախտիկ (131—2), լիսուն-իսուն «Մէ լավ ոտլալ տէսա, իսուն թուման ին ասում» (132—1): Արդի հալերենի նման յ-ի անկում տեղի է ունեցել նաև բառավերջում: Օր. «Մէ ֆրանտ տղա» (19—2):

Ն-ն բառասկզբում, բառամիջում և բառավերջում լսվում է ն: Միայն բառամիջում շրթնային բ-ի կամ փ-ի մոտ ն>մ: Օր. անրիծք-ամբիծկ (հոգեհանգիստ) (437—5), ճանապարհ-ճամփա (301—2): Դրաբարյան վերջահանգի ն հնչյունը որոշ դեպքերում պահպանվել է բառավերջում: Օր. ձուկն-ձուզըն (158—2), գառն-գառըն «Գառըն է դրուստ խիղճը» (360—2), բուռն-բուռըն «Բըռնով էր վրէն ածած» (424—2): Ն-ի անկում հանդիպում ենք եղունգ-դուգ (429—2), կանգնել-կանցնիկ (459—1), որտեղ գ>դ քառի դյուրության համար, և անորոշ գերբալ լինել-լիլ բառերի մեջ «Մէ ըլէլու բան ըլի, դոշըս դանկով կէս անիմ» (193—2):

Ռ հնչյունը բոլոր դեպքերում լսվում է ո:

Ի-ով սխալող բառեր շատ հազվադեպ են, ալն էլ օտար, գլխավորապես վրացերեն բառերում: Օր. «Բա դրօս՝ ցէրէմօնիէջ» (76—2), րիդիսպուրի² (72—1) և այլն: Բառամիջում ր-ն մնում է անփոփոխ, ինչպես երազ-էրազ «էս է՞րազ է» (152—2), երես-էրէս «էրէսըդ խէչր հանէ» (158—2) և այլն: Բայց շ հնչյունից առաջ ր>ռ: Օր. արջ-առջ «Առջի էրկու լաջի փօխէլումն լուս է գցում իր առջութիւնը» (395—2): Բառավերջում ր-ն դարձյալ մնում է անփոփոխ, ինչպես՝ ձոր-ձուր (340—2), ոսկոր-օսկօր (388—2):

Ի-ի անկման դեպքեր նկատվում են ա) ծ և յ բաղաձայններից առաջ արժան-էժան (19—2), դուրս-դուս (149—2), բ) հ-ից առաջ (բառամիջում), որտեղ ր-ի անկումով հ-ն իր հերթին վերածվել է խուլ խ-ի. խուրհուրդ-խօխուրթ (100—1), օրհնել-օխնիկ (11—1), գ) Վյ պալթականից առաջ, երբ-լիփ «Յի՛րիւն էկար» (21—1), երբ որ-իփօր «Իփօր էն ախչըկան գուգիս» (444—1), դ) շ ձայնեղից հետո: Ջրադաց-ջադաց (300—2), ե) բառավերջում «համար» բառի մեջ «Յիս դիփունի համա, դիփունքը ինձ համա» (377—2) զ) բայի հրամայական եղանակի եզակի դեմքում «էստունք տիղավուրէ» (143—1):

Հավելում

Բառերի մեջ բացի հնչյունների անկումից, տեղի են ունենում նաև հնչյունների հավելումներ: Ձայնավորների հավելման երևույթի չենք հանդիպում: Ինչ վերաբերում է բաղաձայններին, ապա պետք է նշենք հետևյալները:

1. «Ն» ռնգային ավելանում է ա) բառերի վերջում որոշիչ հոգի նմանողությամբ: Օր. դու-դուն «Դուն գիդիս» (78), «Դուն քիզ համա, լիս ինձ համա» (148—1):

բ) Բառամիջում նախորդ ռնգականի (մ կամ ն) ազդեցությամբ: Օր. ամաչել-ամանչիկ (Սաթ. 92, 1881), կամուրջ-կարմունջ (151—1):

¹ Ինչ ժամանակն է:

² Հերթահաց, հերթաճաշ:

դ) Բառամիջում որևէ ձայնավորի ազդեցությամբ (առհասարակ ձայնավորները տեղեկնց են ցույց տալիս որոշ խմբի բառերի մեջ քմային հնչյուններ ներս առնելու) Օր. մեծ-մինձ (31—1), քիթ-քինթ (171—2):

«Մ» սնգային ավելանում է հպարտ-հմպարտ բառի մեջ, որտեղ ալ շրթնայինի և Ո-ի արանքում հեշտությամբ մտնում է մ շրթնայինը «Սխկասու ու հրմպարտ վուր կօսին էս է» (149—1):

2. Միավանկ բառերի «նր» խմբի մեջ ավելանում է ու աստամնայինը: Օր. ծանր-ծանդըր (152—2), մանր-մանդըր (327—1), վերջինիս կրկնությամբ մանդըր ու մունդըր (327—1): Այս բառերի բայական և գոյական ձևերի մեջ դ հնչյունը դարձյալ պահպանվում է. օր. մանրանալ-մանդրանալ (370—2):

3. Հ-ի հավելում հանդիպում ենք բառասկզբում, ձայնավորից առաջ: Օր. որս-հուրս (345—2), որսուրդ-հուրանուրդ (422—1):

4. «Բ» շրթնային ավելանում է «մ» խմբի մեջ, օր. համբանք-համբարք (21—2), համբել-համբրիլ (3—2):

5. «Լ» ձայնորդ ավելանում է բառամիջում: Օր. պստիկ-պստլիկ (357—2), խաբան-խափլան (343—1), բոբիկ-բոբլիկ (4—1):

6. «Ր»-ի հավելում բառավերջում՝ ցած-ցածլըր (բարձր-ի անալոգիայով): «Քիչ ցածրըն ըլի ինչ հաջաթ» (145—2):

Դրափոխություն

Բառերի մեջ հնչյունների դրափոխությունը (մետաթեզիս) հետևանք է այն բանի, որ որոշ հնչյուններ դիտակցության մեջ իրենց տեղից շուտ կամ ուշ են հանդես գալիս և փոխում են իրենց տեղերը:

Ամենից շատ տեղափոխվում է ը բաղաձայնը, ինչպես՝ դատարկ-դարդակ (160—1), սովորել-սօրվել (270—2), կամուրջ-կարմունջ (151—1):

«Ն» բաղաձայնը տեղափոխվում է հետևյալ բառերում՝ ականջ-անգաճ (153—1), ոչինչ-վունչիչ (429—1), բանալի-բալնիք (152—2):

«Ս» բաղաձայնի տեղափոխման դեպքեր են ոչխար-օխշար (156—2), բաշխել-բախշիլ (12—2):

Պ, տ, կ բաղաձայնների տեղափոխման դեպքի հանդիպում ենք սպիտակ-սիպտա(կ-ի անկումով) — սիպտըկա բառի մեջ «Սիվ ու սիպտա չէր ջօղում, (430—2), «Մէ լիդր սիպտըկա դիդ ին բանէցրի» (450—1):

Հնչյունաբանական տեսակետից Սունդուկյանի լեզուն հիմնականում պահպանել է բարբառի ասանձահասկությունները, բայց համեմատելով Թբիլիսիի բարբառի հետ, տեսնում ենք հետևյալ շեղումները, որ կատարել է հեղինակը գրական լեզվի ազդեցության տակ:

Փ հնչյունի հետ մեկտեղ գործ է ածել նաև ֆ հնչյունը:

Միավանկ և բազմավանկ բառերի մեջ բարբառում ոչ ու, ինչպես՝ քոյր-քույր, լոյս-լուս: Մենք հանդիպում ենք նաև գրական ձևը: Օր: «Զիորն ու վուտը սառույց կըտըրվէցավ» (425—2) (փոխ. սառուց):

Բարբառում երկու ն-ի միջև գտնվող ձայնեղ պայթական գ-ն վերածվում է ձայնեղ շփական դ-ի, ինչպես կանգնել-կաղնիլ (450—1): Սակայն Սունդուկյանը երբեմն գործ է ածում ուղղակի գրական ձևը: Օր. «Գրիքուրջ օտկում է, Մախրասուլին կանգնում է բօշկի վրա» (450—1):

Բարբառում Եր» հնչյունից հետո ձ>ց, օր. արձակ-արցակ, բարձրութիւն-բացրութիւն և այլն: Սունդուկյանը շեղվելով բարբառից, կրքեմն գրում է նաև ձ-ով «Թէ սըրսօվ վրէս արձան իք ուզում... էս արձանը Պէպօյի համա կանգնէցրէք» (438—2):

Բարբառում բառամիջի Եր» հնչյունից հետո ջ-ն հնչւում է «չ» (խուլ շնչեղ), ինչպես դըրշիլ (թըշիլ) (430—1), վիրչ (350—2), Սունդուկյանը գործ է ածել նաև ձայնեղ «չ» հնչյունը: Օր. «Ակօշկի առջիվը կանգնէցաւ»:

Բարբառում ր ձայնորդի աղդեցությամբ կողքի խուլ ծ-ն հնչւում է ձայնեղ: Օր. գործ-գուրծ: Սունդուկյանը շեղվելով բարբառից, գործ է ածում նաև դրական հնչյունը: Օր. «Գուրծկին արժանաւոր մարթ» (376—1):

Բարբառում «դ» հնչյունը խուլ բաղաձայնների մոտ խլանում է և հընչ-ւում է խ (Օր. կղրալը-ախպէր, մեղք-միտկ, ողջ-վուխչ և այլն): Սունդուկյանը նման բառերում պահպանելով բոռի բարբառային ձևը, «դ» հընչյունը թողնում է ձայնեղ վիճակում՝ միղկ (326—2), ծաղկիլ (384—2), դիղց (113—2) և այլն:

Բարբառում Եր» հնչյունից հետո բառամիջում և բառավերջում տեղի է ունենում հ-ի անկում (օր. շնորհակալ-շնորակալ): Սունդուկյանի մոտ Էրքեմն պահպանված է «հ» հնչյունը: Այսպես՝ շնորհակալութիւն (299—1), շնորհաւորիլ (307—2) և այլն:

Բարբառում ն-ի անկում է կատարւում ամխիթարվիլ և «կանգնել» բառերի մեջ: Բարբառային «խիթարվիլ» և «կաղնիլ» բառերի հետ մեկտեղ Սունդուկյանի մոտ հանդիպում ենք նաև գրական ձևերը «Աստուծ էս հանգի մխիթարութիւն է ավի ինձ» (300—1), «կանգնիլ է վրէս» (99):

Բարբառում Եր» հնչյունից հետո դ ձայնեղը հնչւում է խուլ շնչեղ ր: Օր. որդի-վուրթի, դարդ-դարթ և այլն: Սունդուկյանը գործ է ածել նաև ձայնեղ ձևը (որդի-վուրդի) «Դարդը պիտի տանիմ հիղըս, վուրդի» (28—1):

Վերահիշյալ օրինակներն ասում են այն մասին, որ Սունդուկյանը որքան էլ աշխատել է ամբողջությամբ հարադատ մնալ բարբառին, այնուամենայնիվ գրական լեզվի աղդեցության տակ, անկախ իր ցանկութունից, հաճախ շեղվել է բարբառի հնչյունաբանական օրենքներից: Այդ շեղումները, սակայն, առանձին որակ չեն կազմել և չեն փոխել նրա բարբառային լեզվի ընդհանուր պատկերը: Նրա լեզուն հնչյունական տեսակետից հիմնականում մնացել է այնպես, ինչպես Թրիլիսիի բարբառն է: